ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

18.01.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԱԼ ՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 5/22 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 22.1ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ 0.00221 ՀԵԿՏԱՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 կետով, 35-րդ կետի դ) ենթակետով, հիմք ընդունելով Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ա որոշման դրույթները, և քննության առնելով Լիլիթ Մարտիրոսյանի 2019 թվականի հուլիսի 1-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գորիս քաղաքի Սալ քար թաղամասի թիվ 5/22 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում, Լիլիթ Մարտիրոսյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն գրանցված 22.1քմ արտաքին (20քմ ներքին) մակերեսով ավտոտնակը (կադ. ծածկագիր՝ 09-003-0093-0212, վկ.՝ 23122022-09-0042) (22.1x1100=24310) քսանչորս հազար երեք հարյուր տաս ՀՀ դրամով և 0.00221հա մակերեսով սպասարկման հողատարածքը (22.1x810=17900) տասնյոթ հազար ինը հարյուր ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Լիլիթ Մարտիրոսյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2023/18/01
Ք.Գորիս